

նակն Համթեցիքս մեզ էին յղրկել» կը գրէ Գրիգոր Կեսարացի առ Մեղիսեղեկ մեղադրական նամակին մէջ⁸ :

Աւետիս Էջմիածին-Երեւան կը գտնուէր նաեւ 1617/18ին : Օր մը, երբ Ամիրգունայ խան կը շրջագայէր Երեւան, բերդի կողմերը, «էր անդ առ Սանն եւ Աւետիս կաթողիկոսն եւ երկու եպիսկոպոս ընդ նմա» : Հոս կը պատահի Սանին Մելիու անուն խարբրայ արեղան. Սանի հրամանով կը բռնուի եւ աւազան կը նետուի : Կաթողիկոսի բարեխօսութեամբը միայն կ'ազատի խեղդամահ ըլլալէ . բայց կ'աքսորուի (տե՛ս § 10) :

Աւետիս կաթողիկոսէն ունինք ինքնագիր յիշատակարան մ'ալ Էջմիածնի Թ. 427 Գանձարանին մէջ : Գանձարանը գրուած է ձեռամբ «Յովհաննէս իրիցի» ՌԿԶ (1617) թուին «ի հայրապետութեանն տեառն տէր Աւետիս կաթողիկոսին եւ Վաղարշապատ սուրբ Էջմիածնին. եւ ի թագաւորութեանն Բագրատ Իմիրզին, որ բազում տեղիք էառ եւ տիրեաց զերկիր. եւ արար խաղաղութիւն ոչ սակաւ. բայց հարկայսականջութիւն բուռն եւ ծանր էր ի վերայ քրիստոնէից» : Այս ձեռագիրը նորոգել կու տայ Աւետիս կաթողիկոս եւ հետեւեալ արձանագրութիւնը իր անուն յիշատակ կը թողու. «Ես տէր Աւետիս կաթողիկոս այս Գանձարանս գնեցի հալալ արդեանց իմոց. եւ նորոգել տվի յիշատակ ինձ

⁸ Թորոս Աղբար, Բ., 288 :